ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ 300 ՏԱՐԻՆ

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ

Ժամանակները ընկունակ չեն խամրելու մեծագույն իրադարձությունների պատմական նշանակությունը, անկախ այն հանգամանքից, թե դրանք ինչպես են ընկալվում տարբեր սերունդների կողմից:

Ռուսական պատմության մեջ այդպիսի իրադարձությունների շարքին է պատկանում Պետրոս Ի-ի կողմից 1703 թվականի մայիսի 16/27/-ին Սանկտ Պետերբուրգի հիմնադրումը, որին վիճակված էր խոշորագույն դեր խաղալ ոչ միայն ռուսների, այլև Ռուսաստանում բնակված տասնյակ ու տասնյակ ազգերի, այդ թվում և հայերի կյանքում: Երեք հարյուր տարիների ընթացքում կրելով տարբեր անուններ՝ Սանկտ Պետերբուրգ, Պետերբուրգ, Պետրոգրադ, Լենինգրադ և կրկին՝ Սանկտ Պետերբուրգ՝ այդ քաղաքը 1712 թ. ի վեր (մի փոքր ընդհատումով՝ 1728–1732 թթ.) մինչև 1918 թ. մարտ ամիսը Ռուսաստանի մայրաքաղաքն էր, որն այսօր էլ ռուսաստանցիները սիրով կոչում են «Հյուսիսային մայրաքաղաք» և երախտապարտությամբ են հիշում նրա հիմնադրին: Ավանդաբար ստեղծվել է այն կարծիքը, թե Պետրոս Մեծը (ի միջի այլոց Պյոտր հունարեն նշանակում է «Ժայռ» և խիստ սազական է նրան), հիմնելով Սանկտ Պետերբուրգը, «բացել է պատուհան» դեպի Եվրոպա և նպատակ է ունեցել չվեդներից ետ խլել Ռուսաստանից գավթած տարածքները:

Նշենք, որ դա նպատակներից մեկն է եղել միայն: Առավել կարևորվել է այդ պատուհանով Եվրոպայի շունչն ու քաղաքակրթությունը Ռուսաստան բերելը: Երկիրն այդ ժամանակ գտնվում էր ճորտատիրական կապանքների մեջ: Այդ փաստը առավել ցցուն պատկերված է Ալեքսանդր Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» հայտնի քերթվածում: Պետրոս Մեծը նպատակ էր դրել դեռևս իր կենդանության օրոք հասնելու Ռուսաստանի առաջադիմությանն ու եվրոպականացմանը: Բայց քանի որ Ռուսաստանն այդ ժամանակ, իրենց իսկ՝ ռուսների բնութագրմամբ, բարբարոսական վիճակում էր, Պետրոս Մեծն այդ բարբարոսության դեմ պայքարի ելավ բարբարոսական մեթոդներով:

Պատմությունը, սակայն, դրա համար չդատապարտեց Պետրոս Մեծին, քանի որ այլ միջոց՝ հասնելու Ռուսաստանի առաջադիմությանը, այն ժամանակ չէր նշմարվում:

Պետրոս Ի-ը ոչ միայն հիմնեց Սանկտ Պետերբուրգը, այլև ստեղծեց ժամանակակից ռազմական ու առևտրական նավատորմ, դրա շինարարությանը մասնակցելով որպես ատաղձագործ, մի մասնագիտություն, որ նա ձեռք էր բերել Ամստերդամի և Լոնդոնի նավաշինարաններում աշխատելիս: Ռուսաստանը շուտով դարձավ Եվրոպայի ծովային խոշոր տերություններից մեկը, աշխարհի ջրերում Իսպանիայի, Պորտուգալիայի, Անգ-

լիայի և Ֆրանսիայի նավատորմների կողքին ծածանելով իր ծովային դրոշը: Սանկտ Պետերբուրգը անխորտակելի դարձրեց Ռուսաստանի հյուսիսային սահմանները: Կայսրը հիմնեց ռուսական կանոնավոր և խիստ կարգապահ բանակ, իր ձեռքով գրելով և գործողության մեջ դնելով բանակի և նավատորմի կանոնագրությունը:

Պետրոս Մեծը մշակեց երկրում անցկացվելիք անհատական ու ազգմական բարեփոխումների ծրագիր, որի իրագործմանը խոչընդոտողներին նա անխնա հեռացնում էր իր ճանապարհից, չխնայելով ոչ մեկին, այդ թվում իր որդուն, որին մահվան դատապարտեց 1718 թ.: Նրա համար «անհատի իրավունք» հասկացությունը գոյություն չուներ: Նա իր յուրաքանչյուր քայլը բխեցնում էր պետության ընդհանուր շահերից: Նա խորապես ուսումնասիրում էր եվրոպական տերությունների կայացման պատմությունը և աշխատում էր ընդօրինակել Ռուսաստանի համար ընդունելի նրանց փորձը:

Նրա ընդօրինակելի պետական գործիչը կարդինալ Ռիշելյեն, որ XVII դ. առաջին 40-ամյակում ոչ միայն Ֆրանսիան էր պահում իր ձեռքում (չնայած անվանապես թագավորում էր Լյուդովիկոս XIII-ը), այլև իր խարդավանքներով ու հնարամտությամբ լարված վիճակի մեջ էր պահում Անգլիային, Իսպանիային և մյուս տերություններին: Ռիշելյեն էր ֆրանսիական абсолютизмի հիմնադիրը, մի գաղափար, որն այնքան խոր արմատներ սերմանեց ֆրանսիական հողում, որ հետագայում այդ գաղափարով ներշնչված Լյուդովիկոս XIV-ը հորջորջաց, թե պետությունն այդ ինքն է:

XVIII դ. Ռուսիայում տարածված էր պարականոն մի պատմություն, թե իբր Պետրոս I-ը այցելել է Ռիշելյեի գերեզմանին և ասել, թե «ես իմ թագավորության կեսը կտայի, միայն թե սովորեի մյուս կեսը կառավարել»: Այդ առասպելին հիմք էր ծառայել Պետրոս Մեծի ռիշելյեական գործելակերպը: Ֆրանսիայում Ռիշելյեն, իսկ Ռուսաստանում Պետրոս Մեծը հաստատեց абсолютизմը կայսրերի բացարձակ միահեծանությունը, որը պահպանվեց մինչև Ռոմանովների դինաստիայի տապալումը, մինչև 1917 թ.:

1700 թ. Պետրոս I-ը մայրեց նոր օրացույց, տարին սկսելով հունվարի մեկից և ոչ թե սեպտեմբերի մեկից, ինչպես ընդունված էր մինչև այդ Ռուսաստանում: 1721 թ. նա Ռուսաստանը հռչակեց կայսրություն, իր տիտղոսին ավելացնելով բոլոր նվաճված երկրների թագավոր լինելը: Այդ ավանդույթը ևս պահպանվեց մինչև 1917 թ.: Օրինակ, երբ 1828 թ. հռչակվեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Նիկոլայ I-ի տիտղոսին ավելացվեց նաև «Հայաստանի թագավոր» տիտղոսը:

Պետրոս Մեծը հասկանում էր գիտության և կրթության անառարկելի դերը երկրի առաջադիմությունն ապահովելու համար: Հենց նա Ռուսաստանում հիմնեց գիտությունների ակադեմիա, սրան կից ստեղծելով համալսարան և գիմնազիա, շաղկապելով գիտությունն ու կրթությունը: Հետագա դարերի ընթացքում հենց այդ հանգամանքը ապահովեց ռուսական հզոր գիտության, մշակույթի և դրանց հիման վրա առաջադիմական գաղափարների զարգացումը, ինչը հետագայում կռվան հանդիսացավ նաև

արևելահայ մշակույթի, գիտության և դեմոկրատական դաղափարների ձևավորման համար:

Պետերբուրգում ձևավորվեց հայկական դաղութ, որի բոլորիս հայտնի երեելի դեմքերը ծանրակշիռ դեր խաղացին հայ հասարակական կյանքում և հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման խնդրում:

Պետրոս Մեծի անունը այսօր էլ իր դրական դերն է կատարում Ռուսաստանում գիտության զարդացման ավանդույթները պահպանելու խնդրում: Զավեշտական է, բայց փաստ է, որ երբ Նիկիտա Խրուշչովը դարձավ երկրի առաջին դեմքը, իր տգետ և նենդ շրջապատի թելադրանքով փորձեց նսեմացնել գիտությունների ակադեմիայի դերը (ծանոթ խարդավանք, որ կատարվեց Հայաստանում տաս տարի առաջ, այսօր նորից իշխանության ձգտող ուժերի կողմից և կասեցվեց Ցադեյ Սարդսյանի ջանքերով: Իսկ ԽՍՀՄ ակադեմիայի պրեզիդենտ Նեսմեյանովի փորձերը՝ ետ պահել Խրուշչովին այդ խավարամիտ քայլից՝ ազդեցություն չէին ունեցել նրա վրա: Այն ժամանակ Նեսմեյանովը հայտարարել էր, որ հրաժարվում է ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնից, և ավելացրել, որ ժողովուրդը կասի, թե «Պետրոս Մեծը հիմնեց Ռուսական ակադեմիան, իսկ Խրուշչովը փակեց այն»: Միայն այդ վախը դսպեց Խրուշչովին): Այնպես որ, իսկական մեծությունները իրենց մահից հարյուրամյակներ անց էլ մասնակցում են ապրողների կյանքին:

Պետրոս I-ի պետական կառավարման փորձը, անկախ հետագա գարաշրջանների ձեռքբերումներից, զուրկ չէ ուսուցողական լինելուց՝ կամքի դրսևորման, նպատակների հստակության և սլետականության դաղափարներին նվիրված լինելու առումով:

Թե ինչու մենք, հայերս, մշտապես պատկառանք ենք տածել Պետրոս I-ի, Էնգելսի բնութագրմամբ՝ «Իրոք այդ մեծ մարդու» նկատմամբ, մեծապես պայմանավորված է հայերի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքով: Այս միտքն ավելի առարկայական դարձնելու համար թույլ տվեք ձեր հիշողության մեջ վերականգնել պատառիկներ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, որոնք ուղղակիորեն առնչվում են հայ-ռուսական հարաբերությունների ձևավորմանն ու Պետրոս I-ի գործունեությանը:

Պետրոս I-ը մեծ ակտիվություն հաղորդեց Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը, որի նպատակներից մեկը Պարսկաստանին տիրանալն ու դեպի Հնդկաստան ճանապարհ բացելն էր: Իսկ Արևելյան Հայաստանն այդ ժամանակ Պարսկաստանի տիրակալության տակ էր գտնվում: Հայերը ձգտում էին դուրս գալ այդ լծի տակից, իսկ ռուսները՝ տիրանալ նախ և առաջ Հայաստանին: Շահերի այս փոխադարձ զուգորդումն էր, որ հիմք հանդիսացավ հայ-ռուսական հարաբերությունների սերտացմանը:

Այդ հարաբերությունները, սակայն, չէին սկսվում Պետրոս I-ով: Դեռևս Կիևյան Ռուսիայի կայացման ժամանակներում ռուսական աղբյուրների վկայությամբ, 1060 թ. Կիևի իշխանի հրավերով հայ ճարտարապետները մասնակցել են Կիևում լուսավորչական դավանանքի եկեղեցու կառուցմանը: Վլադիմիր Մոնոմախի պալատում կային նշանավոր հայ բժիշկներ, ճարտարապետներ, նկարիչներ, որոնք մեծապես օգնել են Կիևի կառուց-

մանը: Իսկ շատ հայորդիներ մասնակցել են Ռուսիայի մղած պատերազմներին:

Հայ առևտրականները նպաստել են տարբեր երկրների հետ Ռուսաստանի առևտրական կապերի ամրապնդմանը: XI դ. Վոլգայի ափին գտնվող Բոլգար քաղաքը հայ մեծահարուստ առևտրականների մշտական ապրելավայրն էր: Նրանք ճորտատիրական Ռուսաստանում վայելում էին ազատներին արտոնված իրավունքներ:

XVI դ. կեսերից հայկական գաղութ գոյություն ուներ Մոսկվայում: Այսպես, Կարմիր հրապարակում, ի նշանավորումն Կազանի խանության դեմ տարած հաղթանակի, Իվան Ահեղի հրամանով կառուցվեց Վասիլի Երանելու տաճարը (Պոկրովսկու տաճարը): Առայսօր կանգուն «Այդ տաճարն ուներ երկու հարկ, վերնահարկում ինը կցաշենքերից մեկը կրում էր Գրիգոր Լուսավորչի անունը: Այդ կցաշենքին տալով հայկական ոգեթարանի տեսք, ցարը այն նախատեսեցին ի մխիթարություն այն հայ առևտրական մարդկանց, որոնք Կազանի գրավման ժամանակ տեղի ունեցած գաժան ջարդից հետո այնտեղից վտարվել էին Մոսկվա և ցարի հրամանով ընակեցվել «Ելի գորոդ»-ում «ազատ, արտոնություններից զրկված մարդկանց մեջ»:

Առ պատմական այն ժամանակահատվածն էր, երբ թուրք-պարսկական արյունահեղ պատերազմների հետևանքով ձեռքից ձեռք էր անցնում Հայաստանը և ոտնակոխ էր արվում հայությունը: XVI դ. երեսնական թվականներին թուրքերը ներխուժեցին Արևմտյան Հայաստան, իսկ 1554 թ. հասան մինչև Արարատյան դաշտ, գրավեցին Երևանը և այրեցին այն:

Չնայած 1555 թ. Ամասիայի պայմանագրով Հայաստանը բաժանվեց երկու բռնակալական տերությունների միջև, սակայն դրանից հետո մոտ մեկ հարյուրամյակ շարունակվեցին թուրք-պարսկական ավարառու արշավանքները՝ ամբողջ Հայաստանին տիրելու համար: 1639 թ. նորից Հայաստանի բաժանումը հավաստող պայմանագիր կնքվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև և դրանով իսկ տապանաքար դրվեց Հայաստանի ամբողջականությունը վերականգնելու հայերի հույսերի վրա:

Այս շրջանից ի վեր հայոց ազատագրական պայքարի կազմակերպիչները արտաքին ուժերին էին դիմում հայոց հողերի միավորման և անկախ պետականության վերականգնման համար: Երբ 1453 թ. թուրքերը գրավեցին Կ. Պոլիսը, և, Հովհ. Թումանյանի արտահայտությամբ, իրենց արյունոտ թաթը դրեցին Այա Սոֆիայի սուրբ պատերին, «Եվրոպական թագավորները, ռուս մեծ պատմաբան Կարմազինի արտահայտությամբ, սարսափահար եղան», քանի որ թուրքական հորդաները սպառնում էին ներխուժել Եվրոպայի խորքերը: Իսկ Հայաստանի բաժանումը թուրքերի և պարսիկների միջև այդպիսի ազդեցություն չթողեց եվրոպական արքունիքների վրա, սակայն Հայկական հարցը դարձավ նրանց երկարատև շահարկումների առարկա՝ Մերձավոր Արևելքում իրենց շահերի համար մղվող պայքարում:

Այս ֆոնի վրա է դիտարկվում Ռուսաստանի խաղացած դերը մեր ժողովրդի ճակատագրում: Սակայն ասել, թե այդ ճակատագրի նկատմամբ մտահոգիչ վերաբերմունքի հետևանք է եղել Ռուսաստանի վարած քաղա-

քականությունը, միակողմանի կլիներ: Ռուսաստանը, բնականաբար, իր շահերն էր հետապնդում, որոնք, սակայն, համահունչ էին հայ ժողովրդի ազատագրական պայքարի ձգտումներին: Այդ իրողությունն էր կամրջում հայ-ռուսական բարեկամությունը:

Կրկին հիշենք. եվրոպական տերություններ, Ռուսաստան, Պարսկաստան, Թուրքիա՝ ըոլորը ձգտում էին տիրանալ Անդրկովկասին, ամրապնդել իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում: Այդ նպատակների իրագործումը դյուրացնելու նպատակով նրանք սեպ էին խրում երկրամասի բազմազգ ժողովուրդների միջև, նրանց հանում միմյանց դեմ և ստեղծում էին իրավիճակ, որը բացառում էր այդ ժողովուրդների միասնական ճակատի կազմակերպումը: Հայ ժողովուրդն ու Հայաստանը հայտնվեցին հակասությունների այս անլուծելի թնջուկում: Եվ թող ոչ մի պատմաբան, սոցիոլոգ կամ քաղաքական գործիչ այդ վիճակից հայերի փրկության ելք չգտնելու մեղքը չփնտրի պետականությունից և կազմակերպված ռազմական ուժից զուրկ երկասված հայ ժողովրդի մեջ:

1699 թ. Անգեղակոթում հավաքված հայ մելիքներն այդ ելքը փնտրում էին Ռուսաստանից ակնկալվող օգնության մեջ: Այդ նպատակին հասնելու համար նրանք որոշեցին խնդրագրով դիմել Պետրոս I-ին, նրա մոտ ուղարկելով հայ ազատագրական շարժման արդեն ճանաչված գործիչ Իսրայել Օրուն, որին համարում էին հայ թագավորական դինաստիաներից սերված անձ:

Ռուսաստանն այդ ժամանակ պատերազմում էր շվեդների դեմ և չէր կարող անմիջական արձագանք տալ հայերի խնդրանքին, չնայած ռուսական արքունիքն այն ընդունել էր ջերմությամբ: Իսրայել Օրին 1704 թ. սեկնեց Եվրոպա: Եթե ռուսական իշխանություններից հայերն աղերսում էին անմիջական օգնություն թուրքերի և պարսիկների լծից ազատագրվելու համար, ապա եվրոպական արքունիքներից նրանք խնդրում էին ազդել պարսկական շահերի և թուրք սուլթանների վրա թույլ չտալու իրենց պետության մեջ ճնշելու քրիստոնյաներին: Երկու տարի ապարդյուն դռներ բախելուց հետո Օրին վերադարձավ Մոսկվա և իմացավ, որ Պետրոս I-ը ծրագրում էր կազմակերպել պարսկական արշավանք: Օրին կրկին առաջարկեց իր ծառայությունը և Պետրոս I-ից ստանալով գնդապետի աստիճան, ղեկավարեց 1707 թ. Պարսկաստան մեկնող ռուսական դեսպանությունը:

Վերջինիս առջև խնդիր էր դրվել տեղեկություններ հավաքել դեպի Պարսկաստան տանող ճանապարհների և այդ վայրերում տիրող իրավիճակի մասին: Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի վկայությամբ, Օրին իր ճանապարհորդության ընթացքում հիմնովին հետախուզել էր Անդրկովկասում ռուսական զորքերի հնարավոր տեղաշարժերի բոլոր ուղիները:

Պետրոս I-ը իր ձեռքով գրած հրահանգում հանձնարարել էր Օրին տեղեկանալ հայ ժողովրդի մասին, ճշտել, թե «չատ է, նաև ինչ տեղերում է ապրում և նրանց մեջ իշխանական և վաճառականական ինչպիսի անվանի մարդիկ կան և որքանով են նրանք ցարական մեծության կողմը, նրանց հետ վարվել սիրալիր և թեքել բարյացկամության»:

Պարսկաստանում ռուսական դեսպանությանն ընդունեցին սառնությամբ, նկատի առնելով դեսպանի հայ լինելը: Օրին մշտական հակադրության տակ վերցվեց, և երբ 1711 թ. վերադառնում էր Ռուսաստան, Աստրախանում մահացավ: Նույն կաթողիկոսի վկայությամբ «չար և նախանձ անձինք» նրան թունավորեցին: Օրին չկարողացավ իր հավաքած տեղեկությունները հասցնել Պետրոս Մեծին: Պարսկական արշավանքը հետաձգվեց, ինչը խոր ցավ պատճառեց ողջ հայությանը: Ձիրադործվեցին նաև վրաց թագավոր Վախթանգ VI-ի ակնկալիքները, որոնք կապված էին այդ արշավանքի հետ:

1715 թ. Պետրոս I-ը Օրիին տրված հանձնարարականով Պարսկաստան ուղարկեց մի նոր դեսպանություն, այս անգամ Ա. Վոլինսկու ղեկավարությամբ, որը ներկայացավ շահին ռուս-պարսկական առևտրական կապերն աշխուժացնելու պատրվակով: 1718 թ. Վոլինսկին վերադարձավ Մոսկվա, իր հետ բերելով անհրաժեշտ ինֆորմացիա: Օգտագործելով այն տիպը, որ Շամախի քաղաքում շահի դեմ բուռնաբարձրացրած խռովարարները սրախողխող էին արել ռուս առևտրականներին, Պետրոս I-ը հայտարարեց, որ իր զորքերը Շամախի են «գնում ոչ թե Պարսկաստանի դեմ պատերազմելու, այլ մեզ վիրավորած խռովարարներին պատժելու համար»:

Պետրոս I-ը դիմեց այդ քայլին, երբ ամբողջ Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում եվրոպական տերությունների գործակալները բոլոր միջոցներով դրդում էին պարսիկներին, թուրքերին և լեռնականներին Ռուսաստանի դեմ, ձգտելով խանգարել ռուսների առաջխաղացմանը դեպի հարավ: Իսկ Պետրոս I-ն անհողդողդ էր: Հաղթահարելով ռուսական զորքերի առաջխաղացմանը խանգարող խոչընդոտները, 1722 թ. օգոստոսին նա գրավեց Դերբենդը, որը հնուց ի վեր Կասպից ծովի դարպաս էին համարում: Բաքվի բնակիչները, որոնց մեջ քիչ չէին հայերը, ոգևորված դիմեցին Պետրոս Մեծին, խոստանալով օգնություն, եթե նա գրավեր Բաքուն: Պետրոս I-ը հուսադրող պատասխան հղեց բաքվեցիներին, սակայն արդեն հոգնած և մթերապաշարի խիստ կարիք զգացող զորքերին նա հրաման չտվեց գրավել Բաքուն: Բացի այդ, անհանգիստ էր վիճակը մայրաքաղաքում: Սեպտեմբերին, ռուսական զորքերի հրամանատարությունը հանձնելով գեներալ Մատյուշկինին, Պետրոս I-ը վերադարձավ Պետերբուրգ:

Ղարաբաղի մելիքները շարունակեցին գրավոր դիմումներ հղել ռուսական ցարին, խոստանալով ամեն կերպ օգնել նորին կայսերական մեծության զորքերին իրենց երկրամաս գալու ժամանակ, խոստանալով, որ հայերն ու վրացիները 40 հազարանոց զորքով պատրաստ են օգնելու ռուսական զորքերին թոթափելու պարսիկների և թուրքերի լուծը: Ռուսական զորքերի մոտենալը Բաքվին անհետևանք չմնաց: Այն ազդակ հանդիսացավ Սյունիքում և Ղարաբաղում բռնկված ապստամբության համար՝ ուղղված նախ և առաջ պարսիկների դեմ: Վախթանգ VI-ը այդ ապստամբությունը գլխավորելու համար Հայաստան էր ուղարկել Դավիթ Բեկին՝ Մխիթար սպարապետի հետ միասին: Պարսիկները չկարողացան ճնշել ապստամբությունը, իսկ հայերը չկարողացան ձեռք բերել Սյունիքի և

Ղարարաղի լրիվ անկախությունը: Պարսիկների խարխլված դիրքերին ձգտեցին տիրանալ թուրքերը: Այժմ ապստամբներն իրենց զենքն ուղղեցին թուրքերի դեմ: Պատմական այդ անցքերի գեղարվեստական պատկերավորումն էր Բաֆֆու «Դավիթ Բեկը»:

Պետրոս I-ը չկարողացավ վերադառնալ Անդրկովկաս, սակայն 1723 թ. հունիսին արևելահայերի մոտ ուղարկեց իր բանագնացին Հայազգի Իվան Կարապետին և իր հրովարտակով խոստացավ հայերին ընդունել իր հովանավորության տակ, իսկ նրանց, ովքեր կցանկանային ներգաղթել ռուսական սահմանները կազմակերպելու անհրաժեշտ ամեն մի օգնություն: Այս ընթացքում ռուսական զորքերը շարունակում էին առաջ շարժվել գեպի հարավ: 1723 թ. հուլիսի 26-ին նրանք գրավեցին Բաքուն: Դա նոր ակտիվություն հաղորդեց հայ և վրաց ազատագրական շարժումներին: Սակայն թուրքերի հակառուսական ակտիվացումն Անդրկովկասում, ինչը չէր բացառում թուրք-պարսկական հակառուսական միասնական ճակատի կազմակերպումը, ստիպեց Պետրոս Մեծին 1723 թ. սեպտեմբերին դադարեցնել ռուսական զորքերի հետագա առաջխաղացումը և պայմանագիր կնքել Պարսկաստանի հետ:

Բաքուն և Դերբենդը ճանաչվեցին Ռուսաստանին պատկանող քաղաքներ, Ռուսաստանին զիջվեցին Դաղստանը և Մերձկասպյան ափերը: Սակայն Պարսկաստանում ծայր առած խժդժությունների պատրվակով չահը չվավերացրեց այդ պայմանագիրը: Ստեղծված իրավիճակից օգտվեցին թուրքերը և 70 հազարանոց զորքով ներխուժեցին Անդրկովկաս, գրավեցին Թիֆլիսը և Արևելյան Հայաստանի մի գգալի մասը, Երևանով հանդերձ: Վրաց թագավոր Վախթանգ VI-ը օգնության խնդրանքով դիմեց Պետրոս I-ին: Վերջինս խոստացավ օգնել, բայց չկարողացավ:

Թուրքական վայրագությունների դեմն առնելու նպատակով հայերն իրենց զենքն ուղղեցին թուրքերի դեմ՝ օգնելով պարսիկներին: Թուրքերի հետագա առաջխաղացումը կանխելու համար Ռուսաստանը կամ պետք է պատերազմ հայտարարեր Թուրքիային կամ ամոթալի պայմանագիր կնքեր նրա հետ: Պետրոս I-ը այլ ելք չունենալով, ընտրեց երկրորդ տարբերակը: 1724 թ. հուլիսին Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիրը, որով Ռուսաստանը ճանաչեց Վրաստանի և Հայաստանի այն մարզերի անցումը Թուրքիային, որոնք նա գրավել էր: Թուրքիան ճանաչեց 1723 թ. կնքած ռուս-պարսկական պայմանագրով Ռուսաստանին անցած սահմանները: Ռուս-թուրքական և ռուս-պարսկական պայմանագրերը չլուծեցին այդ երկրների միջև գոյություն ունեցող հակասությունները, որոնցից առաջին տուժողները հայերն էին:

1725 թ. Պետրոս I-ի մահը (նա ապրեց ընդամենը 53 տարի) Ռուսաստանի համար հավասարազոր էր քաղաքական երկրաշարժի, որը կաթվածահար արեց Ռուսաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին արևելյան քաղաքականությունը: Այն վերակենդանացվեց միայն 40 տարի անց:

Պետրոս I-ի քաղաքականությունը որդեգրեց Եկատերինա II-ը, իսկ Իսրայել Օրու առաքելությունն իր վրա վերցրեց Հովսեփ Էմինը: Սկզբնավորվեց հայ-ռուսական հարաբերությունների նոր փուլ, որի կարգավորիչը շարունակում էր մնալ Սանկտ Պետերբուրգը: